ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 70. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները

1. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝

1) հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը,

2) հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը,

3) հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի 65 տարին լրացած լինելը,

4) պատիժ նշանակելու պահին հանցանք կատարած անձի խնամքի տակ անչափահասի կամ հաշմանդամություն ունեցող անձի առկայությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարվել է խնամքի տակ գտնվող անձի նկատմամբ,

5) հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ կատարելը,

6) հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը,

7) հանցանքը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները խախտելով կատարելը,

8) հանցանքը հանցագործությունից տուժած անձի հակաիրավական վարքագծի ազդեցության տակ կատարելը,

9) հանցանքը սպառնալիքի, հարկադրանքի կամ այն անձի ազդեցությամբ կատարելը, որից հանցավորը գտնվում է նյութական, ծառայողական կամ այլ կախվածության տակ,

10) հանցանք կատարած անձի մեղայականով ներկայանալը, հանցագործությունը, հանցագործության այլ մասնակցին բացահայտելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն, գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը,

11) հանցանք կատարած անձի կողմից հանցագործությունից հետո հանցագործությունից տուժած անձին բժշկական կամ այլ օգնություն ցույց տալը,

12) հանցանք կատարած անձի կողմից հանցագործությամբ պատճառված վնասը կամովին հատուցելուն կամ այլ կերպ հարթելուն ուղղված գործողություն կատարելը:

13) Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովին ներկայանալը և հանցագործության վերաբերյալ տեղեկությունների մասին վկայություն տալը:

Հոդված 494. Մարդու իրավունքների պաշտպանին վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը

1. Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա ծառայողական գործունեության հետ, վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 494.1. Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովի գործունեությանը միջամտելը

2. Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովի, նրա նախագահի կամ այլ անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը, հանձնաժողովի անդամի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը սահմանված վայրեր չթույլատրելը կամ խոչընդոտելը.

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հոդված 494.2. Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովին ակնհայտ սուտ վկայություն տալը կամ վկայություն տալուց հրաժարվելը

1. Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովին ակնհայտ սուտ վկայություն տալը կամ վկայություն տալուց հրաժարվելը

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

3. Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

Հոդված 494.3. Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովի կամ նրա անդամի պահանջով անհրաժեշտ նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները չտրամադրելը

Պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովի կամ նրա անդամի պահանջով անհրաժեշտ նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները չտրամադրելը, որը կատարվել է նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով: